Funded by
the European Union

**EU4Dialogue:**

*Support to Conflict Transformation in the South Caucasus and the Republic of Moldova (Component 2)*

UN DP

# Ծրագրային առաջարկ ներկայացնելու հրավեր | Call for Proposal

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) մեկնարկում է «ԵՄ-ն հանուն երկխոսության. աջակցություն Հարավային Կովկասում և Մոլդովայի Հանրապետությունում (Բաղադրիչ 2) հակամարտությունների փոխակերպմանը» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Ծրագրի նպատակն է բարելավել հակամարտություններից տուժած համայնքների կենսապայմանները, նպաստել շահառուների սոցիալ-տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը եւ բարձրացնել մարդկային անվտանգության մակարդակը:

### ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ

1. Հայտադիմումը և ձևաթղթերը կարող եք ձեռք բերել մարզպետարանից, համայնքապետարանից, գյուղի վարչական ղեկավարից կամ ներբեռնել հետևյալ հղումով.

https://bit.ly/EU4Dialogue

- Ծրագրի ներկայացման առցանց հանդիպում կանցկացվի 2023 թվականի հունիսի 29-ին, ժամը11.00-ին (GMT+4): Հանդիպմանը գրանցվելու համար խնդրումենք անցնել հետևյալ հղումով.

https://bit.ly/EU4D_Intro

- Տեղեկատվական հանդիպումներ կանցկացվեն նաև բոլոր 4 մարզերում:
- Դիմորդների համար կանցկացվեն սեմինարներ՝ դրամաշնորհային ծրագրի նախագծման և կազմման հմտությունների զարգացման նպատակով:

  Հանդիպումներին մասնակցելու համար խնդրում ենք անցնել ստորև հղումով և լրացնել գրանցման հայտը մինչև 2023 թ. հուլիսի 7-ը:

https://bit.ly/EU4D_Training

- Նիստերի մասին տեղեկատվությունը կտրամադրվի Ծրագրի թիմի կողմից:

2. Լրացված հայտադիմումները՝ ծրագրային առաջարկների և բյուջեի հետ միասին, խնդրում ենք առձեռն կամ էլեկտրոնային փոստով ուղարկել հետևյալ հասցեներով՝ ՀՀ, ք. Երևան, Պետրոս Ադամյան 14, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, կամ eu4dialogue.am@undp.org էլեկտրոնային հասցեներով փոստով, ոչ ուշ քան ս.թ. հուլիսի 31-ը, ժ. 18:00: Հարցերի դեպքում, խնդրում ենք զանգահարել 060 53 00 00 (226, 118, 229 ներքին համարներով):

### Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ

ՀՀ Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում գործունեություն իրականացնող և/կամ ներկայացուցչություն ունեցող համայնքահեն հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները և այլ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

### ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դրամաշնորհների միջոցով աջակցություն կտրամադրվի համայնքներում տեղական նախաձեռնություններին հետեւյալ թեմատիկ գերակա ուղղություններով.

- Կենսապահովման հնարավորությունների ընդլայնում, զբաղվածության հեռանկարներ եւ շուկաների հասանելիություն.
- Խոցելի / տեղահանված անձանց կենսական կարիքների բավարարում.
- Համայնքային ենթակառուցվածքների բարելավում, ներառյալ՝ ջրի եւ «կանաչ» էներգիայի հասանելիության ապահովում.
- Համայնքի համախմբման եւ ճգնաժամերի նկատմամբ դիմակայունության խթանում:

### Ի՞ՆՉ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ

1. Հայտատուներին հնարավորություն կտրվի մասնակցել դրամաշնորհային առաջարկների մշակման և պատրաստման դասընթացներին:
2. Յուրաքանչյուր դրամաշնորհի համար կհատկացվի առավելագույնը 25,000 ԱՄՆ դոլար:

### ՏԵՒՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դրամաշնորհային ծրագրի առավելագույն տեւողությունը կազմում է 9 ամիս: